

Հայտարարություն

Լսողության խանգարում ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում թափուր աշխատատեղի հարցազրույցի

- Պաշտոնը՝ Լսողական կաբինետի հրահանգիչ
- Աշխատավարձը՝ սահմանված դարույքաչափով
- Գրաֆիկ՝ ամբողջ դրույք
- Աշխատանքային փորձը՝ առնվազն 5 տարի
- Տարածաշրջան՝ Երևան, Նորքի Մարաշ

Աշխատանքի նկարագրություն

- Խոսքի և լսողական ընկալման զարգացման աշխատանքների, երաժշտական ռիթմիկայի պարապմունքների վերահսկում
- Յուրաքանչյուր աշակերտի հետ իրականացվող շտկողական աշխատանքների պլանավորում և հաշվառում
- Սաների լսողական ընկալման և խոսքի զարգացման մակարդակի գնահատում:
- Լսողության հետազոտության (Տոնային աուդիոմետրիա) իրականացում
- Լսողական սարքերի, դրանց հավելյալ մասերի, այլ ակուստիկական սարքավորումների (\$Մ համակարգեր, ինդուկցիոն կոճեր և այլն) վիճակի գնահատում և խնամքի իրականացում
- Ֆրոնտալ պարապմունքների անցկացում
- Լսատեսողական հիմքի վրա մայրենի լեզվի հասկացման, խոսքի բնական հնչողության, ոչ խոսքային ձայների մասին պատկերացումների հարստացման աշխատանքների իրականացում
- Ծնողների, ուսուցիչների և դաստիարակների հետ կապի ապահովում, խորհրդատվության իրականացում

Անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ.

- Բարձրագույն հատուկ մանկավարժական կրթություն (ցանկալի է սուբդոմանկավարժ)
- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ՝ լսողության խանգարում ունեցող երեխաների կրթության ոլորտում
- Լսողության խանգարում ունեցող երեխաների լսողական ընկալման և արտաբերման ուսուցման վերաբերյալ խորը գիտելիքներ
- Հանրակրթության և հատուկ կրթության մասին ՀՀ օրենքների և չափորոշիչների իմացություն
- Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իմացություն
- Ռուսերեն և անգլերեն լեզուների իմացությունը ցանկալի է:

- Զանգահարել՝ (010) 651060, (010) 651050, (091) 529957
- Ուղարկել՝ ինքնակենսագրականը lxue.dproc@mail.ru, babayanlusine41@aspu.am
- Այցելել՝ Երևան, Նորքի Այգիներ 193

Նախնական ընտրություն անցած թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:
Դիմելու վերջնաժամկետը՝ 15.03.2019թ.